ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2023 թվականի N 335- Ա

«Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵՂԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ՇԵԳՈՒՆՑԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՆԱԶԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետով և հիմք ընդունելով Նազիկ Բաղդասարյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2023 թվականի սեպտեմբերի 14-ից լուծել «Ա. Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Դավիթ Շեգունցի հետ 2018 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված N 23 աշխատանքային պայմանագիրը:

2. 2023 թվականի սեպտեմբերի 14-ից «Ա. Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Նազիկ Բաղդասարյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 13
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290